


**1.2.6. Մանրածախ առևտուր, այլ ծառայություններ
(սպառողական շուկա)**

ՀՀ սպառողական շուկան (մանրածախ ապրանքաշրջանառության և բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալը) 2001թ. հունվար - փետրվարին

	2001թ. հունվար-փետրվարի փաստացի ծավալը, մլն. դրամ	2001թ. հունվար-փետրվարը տոկոսներով 2000թ. հունվար-փետրվարի նկատմամբ	Տոկոսներով՝ ընդհանուրի նկատմամբ	
			2001թ. հունվար-փետրվար	2000թ. հունվար-փետրվար
Մանրածախ ապրանքաշրջանառության և բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալը, ընդամենը այդ թվում՝	83405.7	110.5	100.0	100.0
մանրածախ ապրանքաշրջանառություն	58721.9	113.5	70.4	68.5
բնակչությանը մատուցված ծառայություններ	24683.8	104.1	29.6	31.5

ՀՀ սպառողական շուկայում մանրածախ ապրանքաշրջանառության և բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալների տեսակարար կշիռները (տոկոսներով՝ ընդհանուրի նկատմամբ)



Վերլուծությունը ցույց է տալիս, որ 2001թ. հունվար-փետրվարին գրանցվել է սպառողական շուկայի ծավալի աճ 2000թ. նույն ժամանակաշրջանի համապատասխան ցուցանիշի նկատմամբ (համադրելի գներով՝ 10.5%) և դրանում ավելացել է մանրածախ ապրանքաշրջանառության ծավալի տեսակարար կշիռը 1.9 տոկոսային կետով ու համամասնորեն նվազել է բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալի տեսակարար կշիռը: 2001թ. փետրվարին սպառողական շուկայի ծավալը 2001թ. հունվարի համապատասխան ցուցանիշի նկատմամբ կազմել է 99.9 %:

Մանրածախ առևտուր


2001թ. հունվար-փետրվարին ՀՀ սպառողական շուկայում մանրածախ ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալը, փաստացի գներով, կազմել է 58.7 մլրդ. դրամ, որը 2000թ. նույն ժամանակաշրջանի համապատասխան ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով, աճել է 13.5%-ով (իսկ 2001թ. փետրվարին 2001թ. հունվարի համեմատությամբ մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը, համադրելի գներով, կազմել է 99.9%) :

ՀՀ մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը 2001թ. հունվար - փետրվարին

	Ապրանքաշրջանառության ծավալը, մլն. դրամ	Ապրանքաշրջանառության տեսակարար կշիռը տոկոսով՝ ընդհանուրի նկատմամբ
Ընդամենը	58721.9	100.0
այդ թվում՝		
խանութներ	28656.4	48.8
հանրային սննդի օբյեկտներ	681.2	1.2
սպառողական ապրանքների շուկաներ (տոնավաճառներ)	14048.4	23.9
գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ	3290.5	5.6
կրպակներ	12045.4	20.5

Մանրածախ ապրանքաշրջանառության կառուցվածքն ըստ ձևավորման աղբյուրների, 2001թ. հունվար - փետրվարին

(տոկոսներով ընդհանուրի նկատմամբ)



2001թ. հունվար-փետրվարին ՀՀ մանրածախ ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալում մեծ տեսակարար կշիռ է կազմել խանութներում, սպառողական ապրանքների շուկաներում (տոնավաճառներում) և կրպակներում իրականացվող առևտուրը՝ 93.2% (54750.2 մլն. դրամ), իսկ 6.8 %՝ (3971.7 մլն. դրամ) բաժին է ընկել հանրային սննդի օբյեկտներում և գյուղատնտեսական արտադրանքի շուկաներում իրականացվող առևտրին: Հանրապետության մանրածախ ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալում առանձնակի տեղ ունեն սպառողական ապրանքների շուկաները: Գործող սպառողական ապրանքների շուկաներից (տոնավաճառներից) ստացված հաշվետվությունների տվյալներով և փորձագիտական լրահաշվարկի հիման վրա, 2001թ. հունվար-փետրվարին ապրանքաշրջանառության ծավալը, փաստացի գներով, կազմել է 14048.4 մլն. դրամ:


ՀՀ սպառողական ապրանքների շուկաների (տոնավաճառների) ապրանքաշրջանառության ծավալների վերաբերյալ տվյալներն ըստ ՀՀ մարզերի 2001թ. հունվար - փետրվարին

	Ապրանքաշրջանառության ծավալը, մլն. դրամ	այդ թվում տոկոսով՝	ընդհանուրի նկատմամբ
		պարենային ապրանքներ	ոչ պարենային ապրանքներ
Արարատ	88.8	12.4	87.6
Արմավիր	122.0	64.3	35.7
Գեղարքունիք	175.0	14.1	85.9
Լոռի	284.4	32.0	68.0
Կոտայք	166.8	36.0	64.0
Շիրակ	238.4	1.7	98.3
Սյունիք	6.0	-	100.0
Տավուշ	327.0	67.6	32.4
ք. Երևան	12640.0	13.6	86.4
Ընդամենը հանրապետությունում	14048.4	15.7	84.3

Հարկ է նշել, որ հանրապետությունում գործող սպառողական ապրանքների շուկաները հիմնականում մասնագիտացված են ոչ պարենային ապրանքների վաճառքով, որի տեսակարար կշիռը սպառողական ապրանքների շուկաների ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալում 2001թ. հունվար-փետրվարին կազմել է 84.3%, իսկ պարենային ապրանքներինը՝ 15.7%:

ՀՀ սպառողական ապրանքների շուկաների (տոնավաճառների) ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալն ըստ ք. Երևանի և մյուս մարզերի (ամփոփ)

(տոկոսով ընդհանուրի նկատմամբ)



Ինչպես երևում է գծապատկերից, 2001թ. հունվար-փետրվարին 2000թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ հանրապետության սպառողական ապրանքների շուկաների ապրանքաշրջանառության ամբողջ ծավալում գրանցվել է Երևան քաղաքի շուկաների ապրանքաշրջանառության ծավալի տեսակարար կշռի աճ 1.3 տոկոսային կետով:

2001թ. մարտի 1-ի դրությամբ ապրանքային պաշարները մանրածախ առևտրի կազմակերպություններում կազմել են 21818.8 մլն. դրամ, իսկ ապահովվածությունը՝ 45 օր:

Հանրապետության սպառողական շուկայում իրենց ուրույն տեղն ունեն գյուղատնտեսական արտադրանքի շուկաները: Հունվար-փետրվարին այդ շուկաներում իրականացվող առևտրին բաժին է ընկել ընդհանուր ապրանքաշրջանառության ծավալի 5.6% կամ 3290.5¹ մլն. դրամը:


¹ Հանրապետությունում գործող գյուղատնտեսական արտադրանքի չկազմակերպած շուկաների ապրանքաշրջանառության ծավալները հաշվառված չեն:

Բնակչությանը մատուցված ծառայություններ

2001թ. հունվար-փետրվարին հանրապետությունում ըստ արտադրական և սպասարկման ոլորտի առևտրային կազմակերպություններից ստացված հաշվետվությունների տվյալների, ինչպես նաև չհաշվառված դաշտի լրահաշվարկի, բնակչությանը մատուցված ծառայությունների ընդհանուր ծավալը, փաստացի գներով, կազմել է մոտ 24.7 մլրդ.դրամ, որը 2000թ. նույն ժամանակաշրջանի համապատասխան ցուցանիշի նկատմամբ համադրելի գներով աճել է 4.1%-ով (իսկ 2001թ. փետրվարին 2001թ. հունվարի համեմատությամբ ծառայությունների ծավալը, համադրելի գներով, կազմել է 99.7%): Կենցաղային ծառայությունների ծավալը կազմել է 296.2 մլն.դրամ, որը 2000թ. նույն ժամանակաշրջանի համապատասխան ցուցանիշի համեմատ, համադրելի գներով, կազմել է 86.2%: 2001թ. հունվար-փետրվարին 2000թ. հունվար-փետրվարի համեմատ բնակչությանը մատուցված ծառայությունների ոլորտում արձանագրվել է սակագների 2.1% հավելաճ, որը հիմնականում պայմանավորվել է օդային տրանսպորտի (9.3%), կենցաղային (5.7%), մշակույթի (4.6%), իրավական և բանկային(4.0%), տուրիստական-էքսկուրսիոն (3.6%), կրթության (2.6%), կապի (2.5%), առողջարանների և հանգստյան տների (0.3%) ծառայությունների սակագների հավելաճով: Միաժամանակ, նկատվել է բժշկական ծառայությունների սակագների նվազում:

Բնակչությանը մատուցված ծառայությունների կառուցվածքն ըստ տեսակների 2001թ. հունվար-փետրվարին

(տոկոսներով ընդհանուրի նկատմամբ)



2001թ. հունվար-փետրվարին բնակչությանը մատուցված ծառայությունների կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ ունեն բնակկոմունալ ծառայությունները՝ 37.1%, այդ թվում՝ բնակչությանն էլեկտրաէներգիայի մատակարարման ծառայությունների բաժինը կազմել է 28.3%, մարդատար տրանսպորտի ծառայությունները՝ 27.0%, որից՝ օդային տրանսպորտի բաժինը կազմել է 22.4%:

2001թ. հունվար-փետրվարին, ըստ 29 խաղատներից հավաքագրված հաշվետվությունների տվյալների, ծառայությունների ծավալը կազմել է 120.4 մլն. դրամ կամ ծառայությունների ընդհանուր ծավալի 0.5%-ը: